զերէց և զաշխարհական Ցունաց և ի Հայոց ի քաղաքէս և ի Ղալաթիոյ արս ԺԷ և տարան առաջի վէզիրի։ Եւ նա ասէ. Ո՞վ հրաման ետ զկէրիզխանայս ձեր շինել։ Եւ նոքա իբրև սկսին ասել թէ Ծախեցին և գնեցաք մի մի օտայ, յայնժամ խաստէքի եկեալ յարքայէ կոչել զնա. և նա ոչինչ պատասխանիս խնդրեալ, այլ տայ ի ձեռս սուպաշուն դնել զնոսա ի գուբս մահապարտացն։ Եւ մի ի նոցանէ ֆռանկ զոլով՝ ի գուռն վէզիրի գողանան ի ձեռաց նոցա եւ փախուցանեն մինչչև ելեալ առ յերեսս դքսին. և մի ի նոցանէ եազբՃի մսագործաց յօճախէն՝ արք եէնկիչէրիք երթան և առնեն զնա ի ձեռաց նոցա։ Եւ նոյն ժամայն առաքեալ զսուպաշի և զհասասպաշի, զի կալաւ յանցս ճանապարհին զոր և միանգամ եգիտ և զմէյխանէճիս. քարով և փայտիւ և փայտատօք սկսան քակել զՍուրբ Կիրակէ եկեղեցին Ցունաց, որ ի վերոյ Ղումղափոյ, և ապա զերեքինն ևս և զոր ի Վլանկա՝ մինչև յերեկոյ յէ ժամէ աւուրն Բշի որ ամսոյն Ապրիլի ԻԱ։ Եւ ոչ էր որպէս զհրայրեաց տեսիլ, այլ առաւել խոցուած դժնդակ վէրք անտանելի ընդ ահագին դիպուածն։ Միթէ՞ աչք մեր տեսին զայն ամենայն, կամ ի հրապարակս սահմանին մերձեցան ոտք քրիստոնէից և կամ անգամ ևս երևեցան ուր եկեալ էին. այլ անօրինացն ժողով և բռնակալացն զրոհ գումարեալ և հօտք քրիստոնէից եղեն ի կորուստ և ի հալածանս և ի փախուստ մեծաւ տագնապաւ և երկիւղիւ։ Եւ զի կալան յանցս ճանապարհաց, զոր և միանգամ գտանէին՝ տանել ընդ իւրեանս առ ի քանդել զեկեղեցիսն։ Եւ լուեալ զայս փախչէին առ հասարակ և ձերբակալքն՝ ոմանք դրամով հազիւ պրծէին և բազումք եղեալ զպարանոցս ի վերայ սեմոց թէ Հարէ՛ք սրով, ահա՛ պատրաստ եմ և չեմ քակող ընդ ձեզ։ Վասն որոյ յայնմ ժամու ի տունս եւ ի պահեստի տեղւոջ